

ՎԻՍՏԱՅԻ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԵՐՈՒԹՅԱՆ» ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՍԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»

ԿԱՅԱՅԱՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՍՈՑԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ



Նոյեմբերի 28-29-ին Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուսում անցկացվեց «Արևելյան գործընկերության» գագաթաժողովը, որին մասնակցեցին Եվրամիության անդամ երկրների ղեկավարները, ինչպես նաև «Արևելյան գործընկերության» նախագծի շրջանակներում ներգրավված երկրների՝ Վրաստանի, Հայաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Մոլդովայի ղեկավարները: Գագաթաժողովի աշխատանքին մասնակցում է Վրաստանի կառավարական պատվիրակությունը նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու գլխավորությամբ:

Նոյեմբերի 29-ին Վիլնյուսում Վրաստանը նախատրագրեց Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը եւ ճգնաժամների հաղթահարման շրջանակային համաձայնագիրը: Ասոցիացման համաձայնագիրը նախատրագրել են Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեն եւ Եվրամիության արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը, իսկ ճգնաժամների հաղթահարման շրջանակային համաձայնագիրը ստորագրեցին Վրաստանի էկոնոմիկայի նախարար Իրակլի Կվիրիկաշվիլին եւ Եվրամիության առևտրի հանձնակատար Կարել դե Գուլտը:

Ելույթ ունենալով նախատրագրման արարողությանը՝ Վրաստանի պատվիրակության ղեկավար, նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց. «Ես ցանկանում եմ շնորհավորել Վրաստանին եւ Եվրամիությանը փաստաթղթերի ստորագրման կապակցությամբ: Վրաստանը պատրաստակամ է համագործակցել ԵՄ հետ՝ աշխարհում խաղաղության տարածման եւ անվտանգության ամրապնդման գործում»,- նշեց Վրաստանի նախագահը:

Իր ելույթում Գիորգի Մարգվելաշվիլին, խոսելով նախատրագրված համաձայնագրի նշանակության մասին, մասնավորապես ասաց. «Ինձ համար, որպես Վրաստանի նորընտիր նախագահ, մեծ պատիվ է գտնվել ձեր կողքին նման պատմական պահին: Վրաստանը երախտապարտ է Եվրամիությանը»:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐՈՒՄՈՎ ՄԵՆՔ ԻՐԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՅԻԱ ԵՆՔ ՍԿՍՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ»



Վիլնյուսի՝ «Արևելյան գործընկերության» գագաթաժողովի նախօրեին, Վրաստանի նոր վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հեռուստաուղերով ընթացքում հավաստիացրեց, որ Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը կդառնա այդ կազմակերպությանը երկրի անդամագրվելու նախաբանը:

Են, որ այդ գործընթացը կավարտվի Եվրամիությանը Վրաստանի անդամագրմամբ: Սա մեր պատմական ընտրությունն է, որն այլընտրանք չունի: Եվրամիությանն ինտեգրացվելը միակ ճանապարհն է, որը Վրաստանին հնարավորություն կտա դառնալ եվրոպական երկիր»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: Միաժամանակ, նա ընդգծեց խորը եւ համապարփակ ազատ առևտրի գոտու մասին համաձայնագրի նշանակությունը, որը ասոցիացման համաձայնագրի բաղկացուցիչ մասն է:

«Ազատ առևտրի համապարփակ գոտու մասին համաձայնագիրը մեր երկրի համար ճանապարհ կբացի դեպի Եվրամիությունը»:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Վիլնյուսում, Եվրամիության «Արևելյան գործընկերության» գագաթաժողովի շրջանակներում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր անդրամիկ արտասահմանյան ուղևորության ընթացքում անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ:

Մասնավորապես, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի, Լիտվայի նախագահ Դալիա Գրիբաուսկայտեի, Լատվիայի նախագահ Անդրիս Բերգլինշեյնի, Եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցի, վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նախագահ Սուժա Չակրաբորտի-ի, Եվրոպական ներդրումային բանկի նախագահ Վերներ Յոյերի, Եվրոպական տնտեսական եւ սոցիալական կոմիտեի նախագահ Յենի Մալոսսի, գագաթաժողովին մասնակից երկրների մյուս ղեկավարների հետ:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՊԱՍՎ ԿԻՆՅՈՒՄԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ

Նոյեմբերի 27-ին Վրաստանի խորհրդարանն ընդունել է հայտարարություն, որտեղ ընդգծվում է, որ խորհրդարանը պատրաստակամություն է հայտնում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի 2014 թվականին Վրաստանի եւ Եվրամիության միջև ստորագրվի ասոցիացման մասին համաձայնագիրը:

Հայտարարության մեջ նշված է, որ խորհրդարանը լիարժեք աջակցություն է ցուցաբերում երկրի նախագահին եւ կառավարությանը Վիլնյուսի գագաթաժողովում Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի նախատրագրման կապակցությամբ: «Խորհրդարանը վստահ է, որ միջազգային հանրությունը ժողովրդավարական աշխարհը կուժեղացնի ջանքերը «Արևելյան գործընկերության» երկրների աջակցության եւ նրանց ինքնիշխանության պաշտպանության համար, հուսով է, որ Եվրամիության գործընթացում «Արևելյան գործընկերության» երկրները կունենան լիարժեք ընտրության ազատություն»,-

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում մասնակցեց Եվրոպական ժողովրդական կուսակցության եւ «Արևելյան գործընկերության» առաջնորդների հանդիպմանը:

Հայաստանի եւ Եվրամիության միջև Վիլնյուսում ընդունվել է համատեղ հայտարարություն, որով կողմերն ստանձնել են հետագա համագործակցության զարգացման հանձնառությունը: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասված է.

«Եվրոպական միությունն ու Հայաստանը արձանագրում են, որ ավարտել են Ասոցիացման համաձայնագրի, այդ թվում՝ համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունները, սակայն, չեն նախատրագրելու այն, քանի որ Հայաստանն ունի նոր միջազգային հանձնառություններ:

Կողմերը համաձայն են, որ անհրաժեշտ է արդիականացնել ԵՄ-Հայաստան եվրոպական հարեւանության քաղաքականության Գործողությունների ծրագիրը»:

ՄԵՐԺ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Իրակլի Ղարիբաշվիլին Վրաստանի վարչապետի պաշտոնում հաստատվելու առթիվ: Սերժ Սարգսյանն իր ուղերձում անդրադարձել է վրաց-հայկական բարիդրացիական հարաբերություններին եւ հաջողություններ մաղթել վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն նրա պատասխանատու գործունեության մեջ, իսկ Վրաստանի բարեկամ ժողովրդին՝ երջանկություն եւ բարօրություն:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱՎԱՐՏՎՈՒՄ Է ԵՎՈՆՈՍԻԿԱՅԻ «ՄԵԾ ԳՈՒՆԱԹՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ»

2012 թվականի հոկտեմբերյան ընտրությունների արդյունքում, իշխանավորությունից հետո ընդդիմության շարքերն անցած «Միասնական ազգային շարժումը» բոլոր պատեհ առիթներով բարձրաձայնում է երկրում տնտեսական աճի նվազեցման մասին:

Վկայակոչելով տնտեսական աճի դինամիկային վերաբերող վիճակագրական տվյալները՝ «ազգայինները» հայտարարում են, որ ետընթացի պատճառը կառավարական անարդյունավետությունն է:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՇՎԻԼԻ. «ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱՏՈՐԱԳՐՈՒՄՈՎ ՄԵՆՔ ԻՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՎՅՈՒՄ ԵՆՔ ՍԿՍՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

թյան շուկա: Հեռու չէ այն ժամանակը, երբ վրացական արտադրանքն ազատորեն կմտնի Եվրամիության շուկա»,- հայտարարեց վարչապետը:

Վարչապետն անդրադարձավ նաև Ուկրաինայի կառավարության որոշմանը եւ Ուկրաինայում ծավալված իրա-

դարձություններին: Նրա խոսքերով, Ուկրաինայի՝ ասոցիացման համաձայնագրի ստորագրումից հրաժարման որոշումը չի կարող անդրադառնալ Վրաստանի վրա, ընդհակառակը, դա կարող է արագացնել Վրաստանի եւ Եվրամիության միջև համաձայնագրի կնքման գործընթացը: «Ամենակարեւորն այն է, որ Ուկրաինայի օրինակը մեզ համար ցու-

ցանիչ չէ, քանի որ Վրաստանը Ռուսաստանից այնքան էլ կախված չէ»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նշենք, որ Վիճյուսի գազաթափոցված ինքը՝ վարչապետը, վրացական պատվիրակության կազմում չի ընդգրկված, պատվիրակությունը գլխավորում է երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Ֆրանսիայի նախագահի հետ հանդիպումից հետո, Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ իրենք զրուցել են ապագա համագործակցության եւ այն աշխատանքի մասին, որն իրականացվելու է առաջի-

կա մեկ տարվա ընթացքում. «Ես եւ մեր պատվիրակությունը հիացած ենք, քանի որ այսօր արվեց մեր երկրի համար կարեւորագույն քայլ»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նրա խոսքերով, Ֆրանսիայի նախագահը մոտակա ամիս-

ներին կայցելի Վրաստան:

Իր հերթին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը նշեց, որ Վրաստանի նախագահի հետ պայմանավորվածություն է ձեռքբերվել Վրաստան կատարելիք այցի մասին: «Ողջունում եմ այն առաջընթացը, որն արդեն ձեռք է բերվել, հեռանկարում Վրաս-

տանը կդառնա Եվրամիության ասոցիացված անդամ: Մենք խոսեցինք նաև Վրաստանի տարածքային ամբողջականության եւ այն իրադարձությունների մասին, որոնք ներկայումս տեղի են ունենում տարածաշրջանում»,- հայտարարեց Ֆրանսիայի ղեկավարը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՐՏՈՆՅԱԼ ՎԱՐԿ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻՑ



Վիլնյուսում, «Արեւելյան գործընկերության» գազաթափոցված շրջանակներում, Եվրոպական ներդրումային բանկի նախագահ Վիլհելմ Մոլթերը ստորագրեց Վրաստանին 30 միլիոն եվրոյի արտոնյալ վարկ հանձնելու համաձայնագիրը:

Ստորագրման արարողությանը ներկա էր Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Վիլհիլաշվիլին: «Դա երկարաժամկետ, 30 տարվա վրա

մախատեսված արտոնյալ վարկ է: Արտոնյալի ժամկետը կազմում է 10 տարի: Այդ վարկում շատ բարձր է գրանտի բաղադրիչը: Մեզ համար ենթակառուցվածքի զարգացումը կարեւոր նշանակություն ունի, եւ մենք պայմանավորվեցինք, որ նրանց կողմից էլ այդ ոլորտում հետաքրքրությունը կմեծա-

նա, եւ դա ուղղված կլինի փոքր ու միջին գործարարության զարգացմանը: Մենք նաև առաջարկեցինք նրանց Վրաստանում բացել բանկի ներկայացուցչական գրասենյակ»,- ասաց Վիլհիլաշվիլին:

Հիշեցնենք, որ վերոնշյալ վարկը ընդհանուր վարկային գումարի երկրորդ տրամն է, իսկ առաջին տրամնի պայմանագիրը ստորագրվել էր 2012 թվականին, ըստ որի, Վրաստանին հատկացվել էր 170 միլիոն եվրո Արեւելք-Արեւմուտք ճեպընթաց մայրուղու առանձին հատվածների շինարարության համար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԿՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Նոյեմբերի 27-ի լիագումար նիստում, Վրաստանի խորհրդարանը, առաջին ընթերցմամբ, քննարկեց սահմանադրական փոփոխությունների ընդունման կարգը, ըստ որի, սահմանադրական փոփոխություններն ընդունված կհամարվեն այն բանից հետո, երբ խորհրդարանը փոփոխությունների օգտին կքվեարկի մի նստաշրջանի չորսամակներում երկու ընթերցումների, իսկ երրորդ՝ վերջին ընթերցմանը՝ հաջորդ նստաշրջանին, երկրորդ ընթերցումից հետո երեք ամիս անց:

Խորհրդարանի ընթացակարգում սույն փոփոխությունը պայմանավորված է սահմանադրական նոր դրույթներով, որոնք ուժի մեջ են մտել նոյեմբերի 17-ին նոր նախագահի երդմանակալության պահից, եւ որոնցում նախատեսված է սահմանադրական փոփոխությունների ընդունման կարգի բարդացումը:

Մասնավորապես, Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու քվորումը երկու երրորդից (100 ձայն) հասցվել է երեք քառորդի (113 ձայն), նաև սահմանվել է քվեարկությունների միջև եռամսյա ընդմիջման անհրաժեշտությունը:

Մինչև նոր սահմանադրության ուժի մեջ մտնելը, «Վրացական երազանքը» ցանկանում էր քննարկման ներկայացնել սահմանադրական փոփոխությունների ծրարը, որը նախատեսում էր սահմանադրական փոփոխությունների ընդունման քվորումը պահել նախկին մակարդակի վրա: Սակայն, նախագիծը քվեարկու-

թյան չներկայացվեց, քանի որ «Վրացական երազանքին» այն անցկացնելու համար անհրաժեշտ 100 ձայնից առնվազն երկուսը չէին բավարարում:

Սահմանադրական երկրորդ փոփոխությունը, որը «Վրացական երազանքը» ցանկանում էր ընդունել, եւ որի դեմ հանդես էր գալիս «Ազգային շարժում» ընդդիմադիր խմբակցությունը, վերաբերում էր խորհրդարանի գտնվելու վայրին, որի ընդունման դեպքում, հնարավոր կլիներ խորհրդարանը Քութայիսից վերադարձնել Թբիլիսի: Ներկա դրությամբ, վերոնշյալ փոփոխության ընդունման համար, անհրաժեշտ է ստանալ 113 պատասխանատուի աջակցությունը, իսկ դա նշանակում է, որ «Վրացական երազանքին» հարցի կարգավորման համար չի բավարարի առնվազն 14 կամ 15 ձայն:



ՆԵՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՆԵՔՍԱՆՈՐ ԷԼԻՍԱՇՎԻԼԻ. «ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԵՐՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԿՆՇՎԵՆ ՀՍՏԱԿ ՈՒ ԸՆԿԱԼԵԼԻ»



Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հիմնել է ներման պետական նոր հանձնաժողով, որի ղեկավար է նշանակվել լրագրող Ալեքսանդր Էլիսաշվիլին:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են թամար Խիդաշելի, Լիա Մուխաշավրիան, Բասա Ջանիկաշվիլին, Ուչա Նանուաշվիլին, սրբազան թեոդորեն, Էկա Գիզաուրից, Գիլի Շահնազարը, Կոտե Ջանդիերին, Զվիադ Քորիձեն եւ Թեա Գոգոտիշվիլին:

Պետական հանձնաժողովի նորանշանակ նախագահի խոսքերով, բանտարկյալների ներման չափորոշիչները կնշվեն հստակ եւ ընկալելի: Նրա խոսքերով, արդեն ներման հանձնաժողով է մտել 600 դիմում, որից, ներկա գործող չափորոշիչների համաձայն, առանձնացվել է 150-ը: «Որքանով տեղեկացված են, մոտ 200 դիմում


ներկայացվելու է Պատրիարքությունից: Մենք պարտավոր ենք քննարկել բոլոր հարցերը: Հանձնաժողովի անդամիկ աշխատանքային հանդիպումը կանցկացնենք այս շաբաթ եւ կփորձենք արդեն նոր տարվա համար նախագահի ստորագրմանը ներկայացնել առաջին ցուցակը: Կարծում եմ, որ տարեկան հանձնաժողովը պետք է հավաքվի առնվազն հինգ անգամ, որպեսզի ստիպված չլինենք 200-300 գործ քննարկել միաժամանակ: Խոսքը վերաբերում է մարդկանց ծակատագրին, եւ մենք իրավունք չունենք անտեսել մանրուքները»,- հայտարարեց Էլիսաշվիլին:

Նրա խոսքերով, ներման չափորոշիչներն արդեն սահմանվել են, թեպետ կան առանձին մառախլապատ եւ անընդուն-

լի հողվածներ, որոնք հարկ է փոխել:

Ալեքսանդր Էլիսաշվիլու գնահատմամբ, ներման նախկին հանձնաժողովը քաղաքականացված էր, մասնավորապես, «մի ցուցակ մշակվում եւ առաքվում էր, իսկ երկրորդը՝ հաստատվում»: «Նախագահի կողմից եղել են նաև ներման տարօրինակ դեպքեր, սակայն, ես կկապվեմ տիկին Էլենե Թելդորաձեի հետ, մենք կհանդիպենք եւ միասին կքննարկենք առանձին հարցեր»,- հայտարարեց ներման պետական հանձնաժողովի նորանշանակ նախագահը:

Իր հերթին, ներման պետական հանձնաժողովի նախկին նախագահ Էլենե Թելդորաձեն հրաժարվել է հանդիպել հանձնաժողովի նոր ղեկավարության հետ: «Էլիսաշվիլին զանգել է, բայց ես գտնում եմ, որ հանդիպման անհրաժեշտություն չկա, ինձ մոտ գործերը չեն պահվում, բոլորը վարչությունում են»,- հայտարարեց Էլենե Թելդորաձեն:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԽՈՍԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ԱՏՈՐԱԳՐԵԼ ՄՈՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը, նոյեմբերի 29-ին Վիլնյուսում, Եվրոյթ ունենալով «Արեւելյան գործընկերության» գազաթափոցված լիագումար նիստում, խոստացել է «մոտ ապագայում» ԵՄ-ի հետ ստորագրել ասոցիացման համաձայնագիրը:

«Ուկրաինան եւ Եվրամիությունը հասել են ասոցիացման համաձայնագրի կնքման ավարտական փուլին,- հայտարարեց նա:- Համոզված եմ, որ դա մոտ էջ կբացի ուկրաինական պետության զարգացման մեջ, որակապես նոր մակարդակի կհասցնի մեր հարաբերությունները Եվրամիության եւ նրա անդամ պետությունների հետ: Ես հավաստում եմ մոտ ապագայում ասոցիացման մասին համաձայնագիրն ստորագրելու Ուկրաինայի մտադրությունը»:

ԻՏԱԼԻԱ

ԲԵՆԼՈՒՄԿՈՆԻՆ ՋՐԿՎԵՑ ՄԵՆԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ

Իտալացի սենատորները որոշում են կայացրել զրկել Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիին սենատորի մանդատից: Սենատի անդամները դեմ են քվեարկել բոլոր ինն առաջարկներին, որոնք ուղղված էին Բեռլուսկոնիին սենատորի մանդատից զրկելու նախաձեռնության հետաձգմանը:

Միաժամանակ, Իտալիայի նախագահ Ջորջո Նապոլիտանոն հրաժարվել է չեղյալ հայտարարել դատարանի վճիռը, որն անցած ամսին երկրի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիին մեղավոր է ճանաչել եկամտունեքը թաքցնելու մեջ:

Նա նաև նախագուշացրել է Բեռլուսկոնիի կուսակցությանը, որն սպառնում է կառավարական ճգնաժամ հրահարել իր առաջնորդի քրեական հետապնդումը շարունակելու դեպքում, որ օրենքը պետք է իրագործվի անշեղորեն:

Սակայն, Նապոլիտանոն չի բացառել, որ «խիստ սահմանափակ հանգամանքներում» կարող է ներում շնորհել նախկին վարչապետին:

ԻՐԱՆ

«ՎԵՑՅԱԿԻ» ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ Է ԿՆՔՎԵԼ

Միջազգային միջնորդների «վեցյակի» անդամները եւ Իրանը պատմական համաձայնություն են եկել: Դրա համար, դիվանագետների պահանջվել է տասը տարի եւ հինգ օր: Ժնևում ընթացող բանակցությունների արդյունքում, թեհրանն ու «վեցյակը» համաձայնության են եկել, որ Իրանը կկրճատի միջուկային ծրագրի ուղղությամբ տարվող աշխատանքները, միջազգային դիտորդներին հնարավորություն կտան ավելի մանրամասն ուսումնասիրություններ կատարել, իսկ Իրանի նկատմամբ հայտարարված միջազգային պատժամիջոցները կմեղմացվեն:

ԼԱՏՎԻԱ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ Է ԵՂԵԼ

Լատվիայի վարչապետ Վալդիս Դոմբրովսկիսը որոշել է պաշտոնաթող լինել: Այս մասին կառավարության ղեկավարը լրագրողներին հայտարարել է Լատվիայի նախագահ Անդրիս Բերգինշի հետ կայացած հանդիպումից հետո:

Նոյեմբերի 21-ին Ռիգայի «Մաքսիմա» առևտրական կենտրոնում փլվել են շենքի պատերն ու տանիքը: Արտակարգ պատահարի հետևանքով զոհվել է 54 մարդ, եւս 39-ը՝ տուժել:

Լատվիայի ներքին գործերի նախարար Ռիխարդս Կոզլովսկիսը նույնպես հայտարարել է, որ պատրաստ է պաշտոնաթող լինել, եթե ողբերգության մեղավորները չբացահայտվեն եւ արժանի պատիժ չկրեն:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՍՆԱԿՈՐ ԱՅՑ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՅԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ՇՐՋԱՅՑԸ


Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին դեռ գտնվում է արտասահմանում:

Ելնելով նրա ֆեյսբուքի էջում տեղակայված տեղեկատվությունից Միխեիլ Սաակաշվիլին Եվրոպայից, որտեղ նա գտնվում էր նախագահական ընտրություններից հետո եւ, որտեղ հանդիպումներ էր անցկացնում Եվրոպական քաղաքագետների հետ, արդեն երրորդ օրն է, ինչ մասնավոր այցով գտնվում է Միացյալ Նահանգներում:

Վաշինգտոնում Սաակաշվիլին խորհրդատվություններ է անցկացրել Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի քաղաքական լիդերների հետ, հանդիպում է ունեցել Ջոն Մակքեյնի, Ջիմ Շախինի եւ քսան այլ կոնգրեսականների ու սենատորների հետ: 2016 թվականի ԱՄՆ

նախագահական ընտրությունների ամենահավանական թեկնածու սենատոր Մարկո Ռուբիոյին Միխեիլ Սաակաշվիլին պարզեցնել է նախագահական պայծառափայլության շքանշանով: Միխեիլ Սաակաշվիլին պարզեցնում էր հրամանագիրը ստորագրել է նախագահի պաշտոնում գտնվելու իր վերջին օրը: Վաշինգտոնում կայացած հանդիպումներին Միխեիլ Սաակաշվիլու հետ էին նրա խորհրդական

Ռաֆայել Գյուլքամանը եւ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Մարիամ Սաջախան: Մարիամ Սաջախան ԱՄՆ-ում է գտնվում ուսման պատճառով, որի կապակցությամբ, խորհրդարանը մտադիր է բացթողումների համար նրա նկատմամբ ընդունել պատժամիջոցներ: Նա Վրաստանի խորհրդարան է ընդունվել Միասնական ազգային շարժման ցուցակով եւ ամենաերիտասարդ պատգամավորն էր:



ՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԽԱՆՈՒԿԱՅԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՐԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հրեաներին շնորհավորեց ազգային տոնի՝ Խանուկայի առթիվ: Ռուսթավելու թատրոնում անցկացված միջոցառմանը ներկա էին նաեւ Վրաստանի կառավարության անդամները, Վրաստանի հրեական համայնքի ներկայացուցիչները եւ Իսրայելից ժամանած պաշտոնական պատվիրակությունը:

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱՆՎԱՆՎԻ

Չաջորդ տարվա հունվարի մեկից Վրաստանի վերահստեղծման պետության աշխատակազմը կվերանվանվի: Ինչպես հայտարարեց պետության Պատասխանատու Զաքարիաշվիլին, իրենք կառավարությանը դիմել են աշխատակազմը հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության նախարարություն անվանելու առաջարկությամբ: Զաքարիաշվիլու պարզաբանմամբ, հաշտեցման հիշատակումը կվերաբերի աբխազներին եւ օսեթին, իսկ քաղաքացիական իրավահավասարությունը՝ երկրի ներքին ինտեգրմանը: Պետության խոսքերով, երկրի նախագահը շուրջ մեկ տարի չէր հաստատում սույն առաջարկությունը, իսկ հիմա այն արժանացել է կառավարության հավանությանը:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՅԱՆՐԱՊԵՍ ԽՍՏԱՑՎՈՒՄ Ե...

Վրաստանի կառավարությունը խստացնում է այցեգրային պայմանակարգը եւ ներգաղթի քաղաքականությունը:

Ներկա դրությամբ, 118 երկրների քաղաքացիներ իրավունք ունեն առանց այցեգրի Վրաստանում գտնվել 360 օր, իսկ նրանք, ում այցեգիրն անհրաժեշտ է, կարող են այն ոչուրացված ընթացակարգով ստանալ անմիջականորեն սահմանային կետում:

Այսուհետեւ, օրենքը չի սահմանի այն երկրները, որոնց քաղաքացիները կարող են օգտվել անայցեգրային պայմանակարգից: Այդ երկրների ցուցակը կազմելու է կառավարությունը: Վերանայվում են նաեւ օտարերկրացիների երկրի տարածքում գտնվելու

թույլտվության, բնակության եւ այցեգրերի ստացման, ինչպես նաեւ երկրի տարածքից օտարերկրացիների արտաքսման հիմնավորման եւ ընթացակարգի հարցերը: Այդ ոլորտում բացարձակապես նոր օրենսդրական նախաձեռնությունը մշակել է արտագաղթի պետական հանձնաժողովը: Այն արդեն ներկայացված է խորհրդարանի քննարկմանը:

...ԻՍԿ ՇՎԵՅՅԱՐԻԱՅԻ ՇԵՏ ԱՅՅԵԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ՝ ԴՅՈՒՐԱՅՎՈՒՄ

Դյուրացվել է Վրաստանի եւ Շվեյցարիայի միջեւ այցեգրերի հանձնման կարգը: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, «Վրաստանի եւ Շվեյցարիայի միջեւ այցեգրերի հանձնման կարգի դյուրացման մասին» 2013 թվականի սեպտեմբերի 13-ին ստորագրած համաձայնագրի կիրարկման համար, վրացական եւ շվեյցարական կողմերը ավարտել են ներպետական ընթացակարգերը: Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի 2014 թվականի հունվարի 1-ից:

Համաձայնագրի նպատակը նորմալ պայմանների ստեղծումն է Շվեյցարիա այցելող Վրաստանի քաղաքացիների համար: Սահմանափակ, խոսքը վերաբերում է այցեգրային տուրքի չափի, այցեգրերի ստացման դիմումների քննարկման, այցեգրերի հանձնման հետ կապված հարցերի կարգավորմանը: Բացի այդ, դիվանագիտական անձնագրեր ունեցող Վրաստանի քաղաքացիները կարող են առանց այցեգրի լինել Շվեյցարիայի տարածքում կամ այդ երկրով տարանցիկ ուղևորություն ունենալ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ԵՐԹՈՒՂԱՅԻՆՆԵՐՈՒՄ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 28-ից թբիլիսյան երթուղային տաքսիներում ուժի մեջ է մտել սոցիալապես անպահով քաղաքացիների համար 50 տոկոսանոց արտոնությունը:

Ինչպես հայտարարեց «Թբիլիսիի միկրոավտոբուս» ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Ասանիձեն, երթուղային արտոնություններից կօգտվեն միայն սոցիալապես անպաշտպանները: Նրանք արտոնություններից կարող են առօրյա օգտվել չորս անգամ, իսկ հինգերորդ անգամ ստիպված կլինեն վճարել ուղևորության լրիվ արժեքը՝ 80 թեթրի: «Ընդ որում, պլաստիկ քարտերով, որոնք բաժանվել են այդ կատեգորիայի քաղաքացիներին, նրանք երթուղային տաքսիներում կվճարեն ու-

ղ եւ ո - ր ա - ծախսի կեսը: Ընդ որում, առաջին ուղևորությունից հետո երկրորդ եւ երրորդ անգամ ուղևորածախը կկազմի 32 թեթրի»,- հայտարարեց Ասանիձեն:



ԽՍՏԱՅՎՈՒՄ Ե ՈՒՂԵՎՈՐԱԾՈՒՄԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԵՆՆԱԾՈՒՄԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Նոյեմբերի 29-ին Վրաստանի խորհրդարանը, երրորդ ընթերցմամբ, ընդունեց երկրի ներքին գործերի նախարարության կողմից Վրաստանի վարչական օրենսգրքում նախաձեռնված օրինականագիծը, ըստ որի, ուղևորների եւ բեռների փոխադրման կանոնների խախտման համար սահմանված տուգանքը 30 լարիից հասցվում է 100 լարիի: Նոր օրինականագիծով, ուղևորափոխադրումների եւ բեռնափոխադրումների կանոնների խախտման, կամ առանց իրավասու մարմինների համաձայնության խոշորամասշտաբ տրանս-

պորտային միջոցների երթեւեկության համար սահմանված տուգանքը կկազմի 100 լարի: Վրաստանի վարչական օրենսգրքում ներառվել են նաեւ այլ լրացումներ: Մասնավորապես, ուղևորափոխադրումների եւ բեռնափոխադրումների կանոնների խախտման դեպքում, երբ հետեւանքները չեն գերազանցում թեթեւ վնասվածքները, տուգանքի մեծությունը կազմելու է 250 լարի, իսկ ուղևորափոխադրումների եւ բեռնափոխադրումների միջազգային նորմերի խախտման դեպքում, իրավախախտը տուգանվում է 500 լարիով:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

ԿՍՏՈՒԳՎԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԲՈՆԵՆՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ


«Ղազախտրանսգազ-Թբիլիսի» ընկերությունը, ծանային ժամանակահատվածում գազի շահագործման անվտանգության ապահովման նպատակով, նոյեմբերի 10-ին սկսել է յուրաքանչյուր արձնանի գազըրումների ստուգումը:

Գործընթացը, ինչպես տեղեկացրել է Վրաստանի էներգետիկայի նախարարությունը, կշարունակվի ծանային ողջ ժամանակահատվածում: Շրջայցի ժամանակ ստուգվելու է գազի սարքավորումների միացման ստույգությունը: Աբոնենտները նախօրոք կտեղեկացվեն իրենց թաղամասում իրականաց-

վելիք ստուգման մասին: Նշենք, որ վերոնշյալ ընկերության գազային ցանցը Թբիլիսիում կազմում է 2414 կիլոմետր: Ընկերությունը սպասարկում է 260 հազար արձնանի: Այն գազ է մատակարարում նաեւ կոմունալ մշակման 4,9 հազար օբյեկտի եւ 500 խոշոր արտադրական միավորումների:

ՔՐԵՆԱԿԱՆ

ՁԵՐԲԱՎԱԿԵԼ ԵՆ ՍԱԳԱՆՈՅՈՒՄ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՍԿԱԾՎՈՂՆԵՐԸ



Պարեկային ոստիկանության դեպարտամենտի եւ Քվեմո Քարթլիի երկրամասային գլխավոր վարչության աշխատակիցները կանխամտածված սպանության մեղադրանքով ձերբակալել են վեց հոգու:

ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, նրանք, նոյեմբերի 25-ին, ժամը 19:00-ին, Սաղախլոյի սահմանային անցակետում, Մակարով մակնիշի իրազենով վիրավորել են երեք հոգու՝ Մերաբ Կալանդաձեին, Դիլար Մուկրանիային եւ Գիորգի Փիրալիշվիլուն: Հարձակվողները երկու ավտոմեքենաներով էին եւ

փորձում էին փախել դեպքի վայրից: Պարեկային ոստիկանության աշխատակիցները, միջադեպից մի քանի րոպե անց, նրանց ձերբակալեցին: Հրազենն առգրավված է: Տուժյալներին դեպքի վայրից տեղափոխել էին Մառնեուլիի բժշկական կենտրոն, որտեղ երկուսը՝ Մերաբ Կալանդաձեի եւ Գիորգի Փիրալիշվիլին, մահացան: Կանխամտածված սպանության փաստով հետաքննությունը իրականացնում է Քվեմո Քարթլիի երկրամասային գլխավոր վարչությունը:

ՋԱՔԱՐԻԱ ԿՈՒԾՆԱՇՎԻԼԻՆ ԴԵՆԱՑԱԿ ՊԱՇՏՈՆԻՑ

Խորհրդարանի Համախմբակցական խմբի նախագահ Զաքարիա Կուծնաշվիլին հանդես եկավ պաշտոնաթող լինելու մասին հայտարարությամբ: Նշենք, որ ընտրական հարցերի շուրջ աշխատող համախմբակցական խմբի պաշտոնից Կուծնաշվիլու հրաժարականը համաձայնեցված չի եղել խորհրդարանական մեծամասնության հետ: Ինչպես նշեց խորհրդարանի փոխխոսնակ Զվիադ Չիժիգուրին, դա Կուծնաշվիլու անձնական որոշումն էր:

Ներկա դրությամբ, Կուծնաշվիլին հեռացել է նաեւ «Վրացական երազանք» խորհրդարանական խմբակցության նախագահի պաշտոնից: Ներկայումս այն գլխավորում է Գիա Վոլսկին:

ՈՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՍԲ ԵՎԱԶԵԼ Ե ԱՎՏՈՎԹԱՐՆԵՐԻ ԹԻՎԸ

Վիաճակագրական տվյալներով, վերջին մեկ տարվա ընթացքում, Թբիլիսիում, որտեղ տեղադրվել են արագությունը չափող ռադարները, ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը նվազել է 80 տոկոսով, իսկ վթարի արդյունքում զոհվածների թիվը՝ 85 տոկոսով: 2012 թվականի հուլիսի 1-ից մինչեւ նոյեմբերի 25-ը ավտոմեքենայի զոհ էր դարձել 39 մարդ, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածում զոհերի թիվը կազմել է 6 հոգի: Հիշեցնենք, որ Վրաստանի ՆԳ նախարարությունը Թբիլիսիի կենտրոնական շրջաններում, որտեղ առավել ինտենսիվ երթեւեկություն է, եւ մեծ է ավտոմեքենաների հավանականությունը, տեղադրել է 17 նոր ռադար: 18 նոր ռադար է տեղադրվել նաեւ Աջարիայի եւ Գուրիայի կենտրոնական ավտոմայրուղիներում:



ՎԻՆՅՈՒՄԻ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՆՎԻԼԻ. «ՍԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅ Է ՎՐԱՍԱՆԻ ՀԱՄԱՐ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

րամիությանը վերջին տարիների ընթացքում ցուցաբերած քաղաքական և տնտեսական աջակցության համար: Մենք վրացիներս, գիտենք, որ եվրոպացիներ ենք, սակայն պատմական և աշխարհաքաղաքական պատճառներով մեզ չտրվեց եվրախնայողական սկզբնական փուլի գործընթացին ներգրավվելու հնարավորություն: Վրաստանի բնակչության մեծ մասը եւ գործնականում բոլոր հիմնական քաղաքական կուսակցությունները որպես մեր արտաքին քաղաքականության անկյունաքար, պաշտպանում են եվրոպական ինտեգրացումը: Այսօր մենք նախաստորագրեցինք Եվրամիության հետ Ասոցիացիան եւ համընդհանուր ազատ առևտրի համաձայնագիրը: Այդ պայմանագիրը առաջնությունն է հիմնական է հենց ընդհանուր արժեքների՝ օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, կառավարության պատասխանատվության եւ հոգատարության, շուկայական պահանջների վրա հիմնված, բնակչության սոցիալական անպաշտպան ակտիվության անկման: Վերոնշյալ արժեքների մեր հավատարմությունը միանշանակ է: Դա ի հայտ եկավ 2012 թվականին խորի-



րարանական ընտրություններից հետո, երբ առաջին անգամ տեղի ունեցավ իշխանության ժողովրդավարական փոխանցումը, նաեւ ազատ եւ եվրոպական չափորոշիչներին համապատասխան արդարացի նախագահական ընտրություններից հետո, երբ մեր ընտրողները հանգիստ փոխեցին կառավարող ուժերը: Այդ ընտրությունները ցույց տվեցին, որ Վրաստանը դուրս է եկել խորհրդային դարաշրջանից եւ գտնվում է քաղաքական հասունության ու ժողովրդավարական միասնության նոր գործընթացում: Այս քաղաքական ենթատեքստով մենք սպասում ենք, որ կկատարվեն այս գազաթափուկի շրջանակներում ստանձնած պարտավորությունները:

Գազաթափուկից հետո, մեր ամենամեծ սպասումներն անդամաբաժնյա Ասոցիացիան համաձայնագրի ստորագրումն է, որը կներառի ազատ համընդհանուր առևտրի պայմանագիրը, Եվրամիության «Արեւելյան գործընկերության» տարածքում տնտեսական առաջադիմության ապահովումը, Եվրամիության հարեւանության նախագծի շրջանակներում բարեփոխումներին ուղղված գազացման նախագծերը, այցեգրային կարգի դյուրացման եւ անայցեգրային կարգի անցումը, պաշտպանության եւ անվտանգության ընդհանուր քաղաքականության մեջ համագործակցությունը: Մենք ստորագրեցինք Եվրամիության ճգնաժամերի կարգավորման գործողություններում մասնակցության համաձայնագիրը, որպես էներգատարանցիկ երկիր՝ Եվրոպայի էներգամատակարարման նախաձեռնության համագործակցությունը, որը նախատեսում է Եվրոպայի կապը Մերձկասպյան տարածաշրջանի հետ, նաեւ միավորում է եվրոպական էներգետիկական հանրությանը:

ՊԱՍԱ ԶԱԲԱՐԵԻՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԱՏՄԱՍ ԵՆՔ ԱՍՈՑԻԱՑԻՄԻՅ՝ ՄՏԱՅԱԾ ՕԳՈՒՏԸ ԿԻՍԵԼ ԱՐԽԱՉՆԵՐԻ ԵՎ ՕՍԵՐԻ ՀԵՏ»

Վրաստանի վերահսկողական պետության Պասա Զաբարեիշվիլին «Արեւելյան գործընկերության» վիճակագրական գազաթափուկի կապակցությամբ հայտարարեց, որ Եվրամիության հետ Ասոցիացիան համաձայնագրի նախաստորագրումը ընդհանուր առմամբ վիթխարի նշանակություն ունի վրաց պետության համար, մասնավորապես՝ առկա հավանարտությունների խաղաղ կարգավորման տեսանկյունից:



Ինչպես նշեց պետության ղեկավարը, հավանարտությունների խաղաղ կարգավորումը կդառնա Վրաստանի եւ Եվրամիության միջև համագործակցության ներկա փուլի կարեւորագույն հարցերից մեկը: «Վիճակագրական մասին համաձայնագրի նախաստորագրումը, մենք հերթական անգամ հաստատեցինք մեր եվրոպական ընտրությունը: Դա ապագան է, ու մենք միտված ենք եւ առաջարկում ենք արխաղ եւ օս հասարակայնությանը: Վրաստանի կառավարությունը պատրաստ է օսերի եւ արխաղների հետ կիսել այն օգուտը, ինչը վերապահում է Եվրամիության հետ Ասոցիացիան համաձայնագիրը»,- նշեց Պասա Զաբարեիշվիլին:

«Հավանարտությունների խաղաղ կարգավորման համար Վրաստանում Եվրամիությունը մի շարք նախագծեր է իրականացնում, որոնք իրականում ուղղված են ժողովուրդների միջև վատահոլության վերականգնմանը: Եվրամիության ներգրավման գլխավոր նախապայմանն ու բաղկացուցիչ մասը չճանաչման քաղաքականությունն է, որին հստակորեն հետևում են ինչպես Եվրամիությունը եւ միջազգային հանրությունը»,- ընդգծեց Վրաստանի վերահսկողական պետության Պասա Զաբարեիշվիլին:

ՀԱՐՑԱԶՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏՎՈՒՄ Ե ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ «ՄԵԾ ԳՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

րող կոալիցիայի տնտեսական սխալ քաղաքականությունն է, ինչը հանգեցրել է ինչպես արտասահմանյան ներդրումների ծավալի կտրուկ նվազեցման, այնպես էլ՝ երկրում տնտեսական ակտիվության անկման: Վերոնշյալ նկատառումները առաջադրվեցին նաեւ վերջերս խորհրդարանում, նախագահական ընտրություններից հետո կառավարության նոր կազմի հաստատման ժամանակ: Կառավարության տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների, մշակված ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների մասին մենք զրուցեցինք Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար, փոխվարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ:

- **Բառոն Գիորգի, հիմնականում խորհրդարանական ընդդիմությունը կառավարությանը մեղադրում է թյուր տնտեսական քաղաքականության իրականացման մեջ, ինչը հանգեցրել է տնտեսական աճի նվազեցմանը: Ի՞նչ կասե՞ք այդ կապակցությամբ:**

- Կարծում եմ, այդ առումով իրավիճակը աղետալի չէ, առավել եւս, էթե հաշվի առնենք այն, որ երկրի էկոնոմիկայում արմատական փոփոխություններ էին ընթանում: Մենաշնորհված էկոնոմիկան փոխարինվել է մրցակցային էկոնոմիկայով, ինչը, նախնական փուլում բնականաբար հանգեցնելու էր տնտեսական որոշակի անկման: Եթե նախկինում ցանկացած գործարարությունն առնչվում էր որեւէ անհատի կամ բիզնես-խմբի, ապա այսօր այդպես չէ: Այսօր նոր դեմքեր են հայտնվել նախկինում մենաշնորհված այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վառելանյութի ներկրումը, դեղագործությունը եւ այլն: Տվյալ պարագայում, գլխավոր գործարարությանը ընձեռված ազատությունն է եւ բիզնեսի վրա պետության ազդեցության վերացումը:

Ինչ խոսք, տնտեսական աճի նվազեցումը բացասական երևույթ է, սպասում էինք 6 տոկոսանոց աճ, իսկ իրականում ստացանք 2,5 տոկոս: Թեպետ արդեն վստահությամբ կարող ենք ասել, որ արդեն դրվել են իրական շուկայական հարաբերությունների հիմքերը, ինչը ապագա տնտեսական աճի նախապայմանն է: Բնականաբար, ինչ-ինչ

սխալներ եղել են, սակայն համաձայնեք, որ մեկ տարին բավականին քիչ ժամանակահատված է էկոնոմիկայում ծառայած հիմնախնդիրների կարգավորման համար: Առավել եւս, որ մենաշնորհված էկոնոմիկան սկզբնական փուլում, իրոք, ունենում է որոշակի առաջընթաց, թեպետ հետո անկումը գերազանցում է բոլոր սպասելիքները: Դրա հիմնախնդիր օրինակը 2012 թվականն էր, երբ շատ գործարարներ քայլեր էին ձեռնարկում իրենց գործը երկրից դուրս տանելու ուղղությամբ: Ներկայումս նման ոչինչ տեղի չի ունենում:

- **Նոր իշխանության նախընտրական խոստումներից մեկը վերաբերում էր նախաձեռնողների գների նվազեցմանը: Առավել եւս, Դուք նշեցիք, որ վառելանյութի բիզնեսում հայտնվել են նոր դեմքեր, սակայն փոփոխությունները նկատելի չեն:**

- Ցավոք, երբեմն խոստումները իրատեսությունից հեռու են, թեպետ պետք է ասեմ, որ վառելանյութի գները, իրոք, նվազել են: Դա պայմանավորված էր նրանով, որ ոլորտի նոր դեմքերն անմիջապես շուկա մուտք գործեցին մեծ արտադրաքանակություններով: Հենց դա էլ մեծացրեց մրցակցության մակարդակը, ինչը եւ հանգեցրեց գների փոփոխմանը:

Ոլորտում նոր խաղացողների ի հայտ գալը, իր հերթին, պայմանավորված էր գործարար միջավայրի փոփոխմամբ, իշխանության վարչական կամքից եւ ներդրված այն մեխանիզմներից, որոնք առաջիկայում լավ ծառայություն կմատուցեն:

- **Կառավարության կազմի հաստատման ժամանակ Դուք խորհրդարանին ներկայացրիք կառավարական ծրագիրը, որտեղ հիմնականում նշված էին ընդհանուր հիմնադրույթները, եւ բացակայում էին կոնկրետ թվերը: Օրինակ, խոսվում է կուտակային կենսաթոշակային բարեփոխման մասին, եւ դա այն դեպքում, երբ երկրում շատ բարձր է**

գործազրկության մակարդակը: Նման պայմաններում, որքանով է հրատապ կուտակային կենսաթոշակային բարեփոխումը:

- Իսկ մենք չենք էլ պնդում, որ դա հրատապ է, այդ մասին ծրագրում էլ ոչինչ չի նշվել, ուղղակի ասում ենք, որ անհրաժեշտ է նախապատրաստել օրենսդրական բազա կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելու համար: Թեպետ պետք է ասեմ, որ դա նշանակալի բարեփոխում է, եւ Արեւելյան Եվրոպայի երկրներում արդյունավետորեն գործում է: Հիշեցնեմ, որ այդ երկրները գրեթե նույն իրավիճակում էին, ինչպես մենք: Բացառված չէ, որ մեկուկես եւ երկու տասնյակ տարի հետո կենսաթոշակային համակարգում բյուջետային հատկացումների տեսանկյունից անկառավարելի իրավիճակ ստեղծվի:

Բոլոր դեպքերում, մեր գլխավոր խնդիրը տնտեսական գրավիչ է, ամենակարեւորը, կանխագուշակելի միջավայրի հիմնումն է: Դրա համար մշակում ենք նոր կարգավորիչներ, որոնք, բնականաբար, կներդրվեն տնտեսական իրավիճակի խոր եւ բազմակողմանի վերլուծությունից հետո: Դա, առաջին հերթին, գործարարության զարգացմանն ուղղված քայլերն են: Միջազգային բոլոր կազմակերպությունները նշում են, որ այսօր երկրում բացակայում է տնտեսական ինկլուզիվ աճը, այսինքն՝ ՀՆԱ-ի յուրաքանչյուր հարյուրերորդական տոկոսն էլ անմիջակապորեն անդրադառնում է բնակչության բոլոր, այդ թվում՝ նաեւ ամենաթույլ խավերի վրա: Սկսնակ գործարարները պետք է ունենան ֆինանսավորման հնարավորություն: Առաջիկա երեք տարիների համար այդ նպատակով մենք մտադիր ենք ծախսել 140 միլիարդ լարի: Դա թույլ կտա ֆինանսավորել փոքր եւ միջին գործարարությանը, նրանց կտրվեն խորհրդակցություններ, պայմաններ կստեղծվեն միջազգային շուկայում իրենց

տեղը զբաղեցնելու համար:

- **Իսկ ովքե՞ր կկարողանան օգտվել պետության կողմից ցուցաբերվող աջակցությունից:**

- Կհիմնվի գործարարության եւ փոքր բիզնեսի զարգացման գործակալություն: Փոքր գործարարներն այստեղ կարող են ներկայացնել իրենց ծրագրերը: Խելամուտ ծրագրերը կմշակվեն, ֆինանսական հաստատություններին հանձնարարական կտրվեն եւ այլն: Տվյալ պարագայում, չեն լինի բանկային համակարգին բնորոշ գրավի անհրաժեշտության պայմանները: Հաշվի կառնվեն ոչ միայն սկզբնական կապիտալի մեծությունը, այլեւ շրջանառու միջոցները:

- **Կառավարության ծրագրի համաձայն, ներդրումների օրենսդրությունը փոխվում է: Կոնկրետ ի՞նչ փոփոխություններ կլինեն:**

- Թեմայի շուրջ կընկրես ոչինչ ասել չեմ կարող, թեպետ այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում: Նպատակը օրենսդրության համակարգային փոփոխությունն է: Մտադիր ենք ներդրել նաեւ սեզոնային հարկադրում, ինչն ընդունված է շատ երկրներում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է բարձր կարգի հյուրանոցներին:

- **Եվրամիության հետ ասոցիացիան համաձայնագրի նախաստորագրումից հետո, Ձեր կարծիքով, որքանով է մեծ Ռուսաստանի կողմից տնտեսական պատժամիջոցների կիրարկման հավանականությունը:**

- Եթե հաշվի առնենք մյուս պետությունների օրինակները, ապա տեսականորեն նման հավանականությունը չի կարելի բացառել: Հուսով եմ, որ նման բան տեղի չի ունենա, թեպետ գործարարներին զգուշացնում ենք, որ, ծրագրերը կանխագծելիս, ռուսական շուկայի վրա 100 տոկոսանոց հաշվարկներ չկատարեն եւ այն ընդունեն որպես դիվերսիֆիկացված միջոց:

Իհարկե, ցավալի կլինի, էթե Ռուսաստանը այդ ուղղությամբ կրկին քայլեր ձեռնարկի, թեպետ վերջին ժամանակների առևտրական եւ մշակութային կապերի զարգացումը հույսեր է ներշնչում, որ նման ոչինչ տեղի չի ունենա: Թեպետ, կրկնում եմ, ոչինչ բացառված չէ: